ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Թեմա՝ «ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄՈՒՏՔԸ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ»

Առարկա՝ Ֆիզիկական կուլտուրա

Ուսուցիչ՝ Բարսեղյան Գոռ

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ 1
ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՄՈՒՏՔՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ----------5

1.1 Ֆուտբոլ մարզախաղի պատմական նախադրյալները ----------5

1.2 Առաջին միասնական կանոնները և Անգլիայի ֆուտբոլային միությունը----------6

1.3 Ֆուտբոլը առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին----------12

1.4 Ֆուտբոլը աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում----------14

ԳԼՈՒԽ 2
ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ---------19

2.1 ՀՖՖ-ի ստեղծումը և գործունեությունը ----------24

2.2 Ֆուտբոլի 2006-2022թ աշխարհի առաջնության վերլուծությունը-----31

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------34

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը։ Ժամանակակից պայմաններում մարդու առողջության խնդիրները ուղղված են համալիր այն լուծումներին, որոնք պետք է հանգեցնեն հասարակության լիարժեք, առողջ քաղաքացի լինելուն։ Այդ խնդրի կենսագործման ասպարեզում իր ուրույն տեղն ու դերն ունի սպորտը։

Աշխարհի ամենատարածված և ամենասիրված մարզախաղերից է ֆուտբոլը (բառացի՝ «ոտքի գնդակ») է։ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի հաստատումը տեղի է ունեցել եվրոպական երկրների մեծամասնություններում (որում բացառություն էր Գերմանիան) 30-ական թվականների սկզբին, այսինքն 40 տարով ուշ, քան «հայրենիքում»՝ Անգլիայում։

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը անցկացվում է 4 տարին 1 անգամ։ Առաջին անգամ անցկացվել է 1930 թ.։ 1942 և 1946 թթ. աշխարհի առաջնություն չի անցկացվել Երկրորդ Աշխարհամարտի պատճառով։ Մինչև այժմ անցկացվել է աշխարհի առաջնության 20 խաղարկություն, որոնց ընթացքում հինգ անգամ ֆուտբոլի աշխարհի չեմպիոն են ճանաչվել Բրազիլիայի (1958, 1962, 1970, 1994, 2002), չորսական անգամ՝ Գերմանիայի (1954, 1974, 1990, 2014) և Իտալիայի (1934, 1938, 1982, 2006), երկու անգամ Ուրուգվայի (1930, 1950) և Ֆրանսիայի (1998, 2018), երեք անգամ Արգենտինայի (1978, 1986, 2022), մեկական անգամ՝ Անգլիայի (1966) և Իսպանիայի (2010) ազգային հավաքականները։

Աշխարհի առաջնությունը ամենավարկանիշային ֆուտբոլային մրցաշարն է աշխարհում, ամենաշատ դիտվող սպորտային մրցությունն է՝ առաջ անցնելով անգամ օլիմպիական խաղերից։ Ընդհանուր առմամբ 2006թ. աշխարհի առաջնության բոլոր խաղերը միասին վերցված դիտել են 26.29 միլիարդ մարդ, իսկ եզրափակիչը դիտել է աշխարհի բնակչության մեկ իններորդ մասը։

Աշխատանքի նպատակը։ Ուսումնասիրել ֆուտբոլ մարզախաղի միջազգային կառույցների ձևավորման նախադրյալները և մուտքը օլիմպիական խաղեր։

Աշխատանքի խնդիրներն են՝

- հետազոտվող հիմնախնդրի ուղղությամբ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն և ընդհանրացում
- 2006 և 2022թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությունների համեմատական վերլուծություն:

ԳԼՈՒԽ 1

ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱԽԱՂԻ ՄՈՒՏՔՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1.1 Ֆուտբոլ մարզախաղի պատմական նախադրյալները

Պատմաբանները պարզել են, որ ֆուտբոլ խաղացել են մ.թ.ա. 2500 թ.: Մարզախաղի գոյության մասին վկայություններ կան աշխարհի շատ ժողովուրդների պատմության էջերում: Օրինակ՝ Հին Հունաստանում տարածված էր գնդակով խաղը: Իսկ առաջին գրավոր տեղեկությունը, որտեղ հիշատակվում է ժամանակակից ֆուտբոլ հիշեցնող խաղ,թվագրված է մ.թ.ա 180 թ.: Պոլուքսի հունարեն բառարանում կան հետևյալ գրառումները՝ գնդակ խաղացողները բաժանվում են երկու թիմի՝ յուրաքանչյուրը նպատակ ունենալով գնդակը դուրս հանել մրցակցի կիսադաշտից: Միաժամանակ մրցակիցներին թույլատրվել է ձեռքով խաղը, որն արդի ռեգբիի հատկանշական տարրերից է:

Հին Հունաստանում տարածված են եղել գնդակախաղի նաև այլ տարատեսակներ: Հնարավոր չէ ստույգ ասել, թե անտիկ շրջանի որ գնդակախաղն է ժամանակակից ֆուտբոլի նախահայրը: Բայց և այնպես, շատերն այն կարծիքի են, թե ֆուտբոլն իր ծագմամբ պարտական է հին հռոմեական «հարպաստում» խաղին, որը Մեծ Բրիտանիա և Եվրոպա են բերել Հուլիոս Կեսարի լեգեոներները:

Գնդակախաղով զբաղվել են նաև աշխարհի այլ երկրներում: Օրինակ՝ մ.թ.ա. 6-4-րդ դարերում Չինաստանում գոյություն է ունեցել մի խաղ, որն ինչ-ինչ տարրերով ֆուտբոլ է հիշեցրել և զինվորական պատրաստության բաղադրիչներից էր: Յուրաքանչյուր թիմում ընդգրկվել է 27 խաղացող, որոնցից 15-ը կատարել են հարձակվողի, մյուսները՝ պաշտպանի պարտականություններ, ապահովել են դարպասի անառիկությունը դիմային գծի ողջ երկայնքով: Մ.թ.ա. 206 թ. մինչև մ.թ. 25 թ. գրավոր աղբյուրներում հիշատակվում է «չժու-կէ» խաղը: Չժու նշանակում է հարվածել ոտքով, իսկ կե՝ փքված կաշվե գնդակ: Ճապոնիայում դեռևս 14 դար առաջ սիրված է եղել «կոմերի» խաղը: 14 քառակուսի մետր տարածքով հրապարակում տեղաբաշխված ութ խաղացողները, պահպանվելով հաստատված կանոնակարգը, գնդակը փոխանցել են մեկը մյուսին:

Մինչ այսօր Իտալիայում պահպանվել է միջնադարյան «կալ չիե» խաղը, որը, ըստ ավանդույթի, տարին երկու անգամ՝ մայիսի առաջին կիրակի օրը և հունիսի 24-ին, խաղացել են Ֆլորենցիայում: Թիմերը կրել են «Բյանկա» (սպիտակներ) և «Ռոսսի» (կարմիրներ) անունները:

Սակայն ներկա ֆուտբոլի հայրենիքը համարվում է Անգլիան, որտեղ և մշակվել են ներկա ֆուտբոլի կանոնները: Ֆուտբոլային առաջին ակումբը՝ Շեֆիլդ Յունայթեդը (1855-1957) և առաջին ազգային առաջնությունը (1863) հիմնվել են Անգլիայում: 1904 թ. հիմնադրվել է Ֆուտբոլային Միությունների Միջազգային Ֆեդերացիան՝ ՖԻՖԱ: 1930 թ. սկսվել են ֆուտբոլի աշխարհի առաջնության, իսկ 1955 թ.՝ Եվրոպայի երկրների չեմպիոն թիմերի գավաթի, 1960 թ.՝ գավաթակիրների գավաթի, 1973 թ. ՈՒԵՖԱ գավաթի կանոնավոր հանդիպումները:

Ֆուտբոլի պատմությունը մինչև 1950 թ., սկիզբ է առնում միջնադարյան ֆուտբոլից: Ներկայիս Ֆուտբոլային ասոցիացիան հիմնված է Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիայի վրա, որը ձևավորվել է 1863 թ. Անգլիայում գնդակով խաղերի բազմաթիվ ձևերի ստանդարտացման ջանքերի շնորհիվ: Դա հնարավորություն տվեց, որ ակումբների հանդիպումներն ընթանան առանց վեճերի և կռիվների: Ասոցիացիայի հինգերորդ հանդիպումից հետո ռեգբիի և ֆուտբոլի կանոնների միջև բախում է տեղի ունեցել: Այն ժամանակ ֆուտբոլային ակումբները անկախ էին և կանոնները հաստատվում էին խաղը սկսելուց առաջ ընդհանուր համաձայնության գալով:

Ֆուտբոլն օլիմպիական մարզաձև է դարձել 1900 թ. երկրորդ ամառային Օլիմպիական խաղերից հետո:

Թեև մ. թ. ա. մոտ 2000 թ. հին հույները հորինել էին ժամանակակից ռեգբի հիշեցնող գնդակով խաղ, որը կոչվում էր *«էլիսկիրոս»* կամ *«ֆայիվիվդա»*, նոր ժամանակների Հունաստանում ֆուտբոլը հանրաճանաչ է դարձել հիմնականում անգլիացիների միջոցով: Առաջին հունական թիմերը ստեղծվել են Զմյուռնիայում (ներկայումս Իզմիր) 1890-ական թթ. [1]:

1.2 Առաջին միասնական կանոնները և Անգլիայի ֆուտբոլային միությունը

Դեռևս մինչարդյունաբերական Անգլիայի ժամանակներից ուրբանիզացիան ազդել էր այն բանի վրա, որ փողոցներում գնդակով խաղացվող խաղերը դարձել էին

քաղաքաբնակների առօրյա կյանքի մասը [2]: Ֆուտբոլի առաջին միասնական կանոնները և կանոնակարգը ձևավորվել են մասնավոր դպրոցների և Օքսֆորդի ու Քեմբրիջի համալսարանների թիմերում: Ֆուտբոլային կանոնների լավացման առաջին փորձը եղել է 1846 թ., երբ հրապարակվեց «Քեմբրիջյան կանոնները», որն արժանացել է շատ ակումբների հավանությանը: Դրանից առաջ ամեն դպրոց և ամեն ֆոտբոլային ակումբ ուներ իր անհատական կանոները: Մի տեղ կանոնները թույլատրում էին գնդակը վարել և կատարել ձեռքով փոխանցումներ, մեկ այլ դեպքում՝ արգելվում էր: Այսպիսով անգլիական ֆուտբոլը քաոսային վիճակում էր: 1846 թ. եղավ առաջին փորձը ֆուտբոլային կանոնները լավացնելու՝ փոխելու: Գ. դե Ուինտոնը և Ջոն Չառլս Տրինգը Քեմբրիջյան համալսարանից հանդիպեցին մասնավոր դպրոցների ներկայացուցիչների հետ համընդհանուր կանոները ձևակերպելու նպատակով: Քննարկումը տևեց 7 ժամ 55 րոպե, և արդյունքում ստեղծվեց «Քեմբրիջյան կանոներ» անվանումով փաստաթուղթ: Այդ կանոնները արժանացան մեծ թվով դպրոցների և ակումբների հավանության, և հետագայում դրանք դարձան հիմնական կանոները Անգլիայում: Այն ժամանակ ֆուտբոլային խաղերը չէին սահմանափակվում մասնավոր կրթական հաստատությունների սահմաններում, այլ ավելի հայտնի էին բնակչության լայն շրջանակներում: Այն ժամանակվա սպորտային և տեղական թերթերում ֆուտբոլային մրցույթներ անցկացնելու կոչեր էին հայտնվում, չնայած որ խաղը խաղադրույքի վրա էր:

1830-1850 թթ. հաշվարվում էր 70-ից ավելի թիմեր: Նրանք կարող էին ներկայացնել առանձին տղամարդկանց ակումբներ, գարեջրատներ, ամբողջական գյուղեր և երբեմն նույն մասնագիտություն ունեցող երիտասարդներին էին իրար հետ թիմեր կազմում: Նմանատիպ խաղերը հաճախ գրավում էին մարդկանց, քանի որ խաղադրույք էին կատարում: Կանոնները քննարկվում էին խաղի սկզբից առաջ, իսկ խաղը հետևում էին ընտրված երկու թիմերից դատավորը և միջնորդ մրցավարը:

1857 թ. Շեֆիլդում միջին դասի երիտասարդները, որոնք դրանից առաջ ստեղծել էին տեղական կրիկետի ակումբը, հիմնադրել են աշխարհում հնագույն ֆուտբոլային ակումբը՝ «Շեֆիլդը»: Մի տարի անց խաղացողները սահմանել են մի քանի հիմնական կանոններ, որոնք ստեղծել էին հենց իրենք: Ֆուտբոլը հետզհետե գրավում էր տեղի երիտասարդությանը, 1862 թ. շեֆիլդական ակումբը հրապարակել է իրենց կանոն-

ները բրոշյուրի տեսքով: Իր մասնակիցները անցկացնում էին «տասնմեկը տասնմեկի» խաղեր, այն ժամանակ, երբ ուրիշ տեղական մրցումներում դաշտ կարող էին դուրս գալ 14 և ավելի խաղացողներ յուրաքանչյուր կողմից:

Ֆուտբոլի աճող հանրաճանաչությունը խաղացողներին ստիպեց միասնական կանոնակարգ մշակել: «Թայմս», «Ֆիլդ», «Բելս լայֆ» թերթերում սկսեցին հրատարակել ֆուտբոլիստների նամակները, որոնք կարծում էին, որ ֆուտբոլի հետագա զարգացումն անհնար է, եթե չլինեն որոշված պարզորոշ և բոլորի կողմից հաստատված կանոնները: 1962 թ. Ջոն Տրիգը հրատարակեց ֆուտբոլի առաջին կանոնները, որոնք անվանեցին «ամենահեշտ խաղը» [3]:

1863 թ. աշնանը Կոբ Մորիլը իր նամակում սպորտային թերթում՝ «Բելս լայֆ»-ում առաջարկեց ակումբների ներկայացուցիչների անդամներին հավաքվել և ստեղծել ֆուտբոլային կանոնակարգը:

1863 թ. հոկտեմբերի 26-ին (ուրիշ տվյալներով 1963 թվականի հոկտեմբերի 23-ին) 11 լոնդոնական ակումբների ներկայացուցիչները (լոնդոնական ֆուտբոլի ակումբների, նաև Քեմբրիջի և Օքսֆորդի ներկայացուցիչները) հավաքվել էին, որպեսզի ընդհանուր հայտարարի բերեին ընդհանրապես իրարից տարբերվող կանոնները: Տվյալ հանդիպման գլխավոր նպատակը կայանում էր նրանում, որ ակումբները միմյանց միջև խաղեր էին անցկացնում, ամեն անգամ համաձայնության չգալով վիճում էին և հետո նույնիսկ չէին մտածում համաձայնության գալու մասին: Այս հանդիպման շնորհիվ որոշեցին համախմբվել և կանոնները պարտադիր դարձնել բոլոր թիմերի և խաղացողների համար: Ստեղծվեց նաև ֆուտբոլային միություն, որը պետք է հսկեր խաղի ընթացքը: Այդ օրը կարելի է համարել ժամանակակից ֆուտբոլի ծննդյան օր, քանի որ այդ հանդիպման շրջանակներում ստեղծվեցին խաղի կանոնները պահպանելու և վերահսկելու ինստիտուտը [4]: Ստեղծվեց Անգլիայի ֆուտբոլային միությունը: Հանդիպումների շրջանակներում վիճաբանություններ էին գնում բոլոր խաղահրապարակների, բնագավառների և շրջանակների համար: 1863թ. դեկտեմբերի 1-ին՝ հաջորդ հավաքույթին, մեծամասնությունը նախընտրեց այն խաղի տարբերակը, որում գնդակը պետք է վարել ոնքերով և որոշվեց չթողնել, որ օգտագործեն ռեգբիի հարվածները:

Սակայն ո՛չ Քեմբրիջյան կանոնները, ո՛չ ֆուտբոլի ասոցացիայի նոր կանոնակարգը չէին արգելում գնդակին ձեռքով կպնելը: Երկու խաղի կանոններում էլ խաղացողներին թույլատրվում էր գնդակը ձեռքերով բռնել, բայց չէր թույլատրվում խլել, հրել, ոտք գցել և հետևից ոտքին հարվածել:

Շեֆիլդի ֆուտբոլային ասոցիացիա: Ֆուտբոլային ասոցիացիայի գոյության առաջին տասնամյակի փաստերից ելնելով այն ճանաչում չէր վայելում (նրա կազմի մեջ միայն 18 ակումբ կար): Մնացած բոլոր թիմերը շարունակում էին խաղալ նախկին կանոններով, որոնք «ընդդմիությունը» նույնպես պահպանում էր, ստեղծելով դաշտում ռեգբիին նմանվող մի տեսարան: Բացառություն հանդիսանում էր Շեֆիլդ ակումբը, որում կար 14 ակումբ և խաղացողների քանակը 1000 էր: Շեֆիլդի ֆուտբոլային ակումբը ֆուտբոլային ասոցիացիայի ամենաակտիվ անդամներից է եղել, և նա մեծ ներդրում է ունեցել ակումբի հետագա զարգացման գործում: Շեֆիլդի ֆուտբոլիստներն առաջինն էին, որ այլ քաղաքներ խաղերի մեկնեցին, իսկ 1866 թ. փետրվարին նրանք հրավիրեցին ֆուտբոլի ասոցիացիայի ներկայացուցիչներին իրենց խաղին, և բացի դրանից համաձայնվեցին խաղալ ֆեդերացիայի կանոններով: Ֆեդերացիայի անդամներին նրանք համոզեցին ընդունել նաև «խաղից դուրս» կանոնների ազատական մեկնաբանությունը ՝ հարձակվողներին թույլ տալով փոխանցումներ կատարել:

1867 թ. Շեֆիլդում հիմնվել է տեղի ֆուտբոլային ասոցիացիան, որը 1870 թ. հրատարակել է իր կանոնակարգը, որի կանոններից ամենաքիչը՝ 8-ը հետագայում ընդունվել են նաև Ֆուտբոլային ասոցիացիայի կողմից: Սակայն Շեֆիլդի ասոցիացիան վերջնականապես դարձել է Ֆուտբոլային ասոցիացիայի անդամ միայն 1877 թվականին՝ ամբողջովին ընդունելով նրա կանոնները:

Ֆուտբոլային ասոցիացիան կազմակերպել է սահմանված կանոնների հրատարակումը, նաև մտցրել է դատավորների և այլ մասնագետների արտոնագրման գործընթացը: Այդ միջոցները նպաստել են մարզիկների միջև վեճերի ավարտին և ինչպես նաև սահմանել են իրական պրոֆեսիոնալ խաղի և ընկերական խաղերի սահմանները, կանխարգել են մրցումների ընթացքում արտաքին միջամտությունը և արդյունքների վրա ներգործությունը [5]:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլի ստեղծումը: 1880-ական թվականների սկզբին տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որը մեծ ազդեցություն է գործել ժամանակակից ֆուտբոլի զարգացման գործում: Դա առաջին պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների հանդես գալն էր: Սադելի անկեղծ հայտարարությունները ասոցիացիայի ղեկավարներին ստիպեցին ընդունել, որ իրականությունը թելադրում է իր պայմանները:

Չարլզ Օլկոկը հաջորդ կոմիտեյի հավաքին հայտարարեց, որ «ֆուտբոլը օրինականացնելու ժամանակն է եկել»: Դոկտոր Մորլին աջակցեց նրան, սակայն կոմիտեի ոչ բոլոր անդամներն էին նրա հետ համաձայն: Քննարկումները շարունակվում էին մոտ կես տարի, ի վերջո, 1885 թ. հուլիսին պրոֆեսիոնալ ֆուտբոլն օրինականացվեց:

ՖԱ-ի ղեկավարության տակ գտնող անգլիական ֆուտբոլի առանձնահատկությունը արտահայտվում էր նաև նրանով, որ նա համակիրներ էր գտնում նաև իր «հայրենիքից» դուրս: Այդպիսի մշակութային փոխանակության համար նախադրյալ հանդիսացավ ինդուստրիալ դարաշրջանի տեխնիկական զարգացումը՝ ժամանակակից շոգեքարշը: Այդ տրանսպորտային միջոցը XIX դարից սկսած նպաստել է եվրոպական անդրատլանտյան ճանապարհորդությունների մեծ մասշտաբների հասնելուն, ինչպես նաև Անգլիայի և եվրոպական մայրցամաքի միջև ընդհանուր հաղորդակցության ակտիվացմանը: Շատ բրիտանացիներ շոքեքարշ նստելիս իրենց ուղեբեռում գնդակ էին ունենում վերցրած [6]:

Առաջին պաշտոնական միջազգային խաղը
Անգլիայի և Շոտլանդիայի միջազգային խաղ (1872)



Շոտլանդիան ընդդեմ Անգլիայի առաջին միջազգային խաղի իլյուստրացիա, որը կայացել է 1872 թվականին Գլազգոյի Համիլթոն Կրեսենթ մարզադաշտում:

1870 թ. փետրվարին ֆուտոբլային ասոցիացիայի քարտուղարը՝ Չարլզ Օլկոկը սպորտային թերթում հայտարարություն տեղադրեց, որում ասվում էր, որ շուտով կկայանա Շոտլանդիայի և Անգլիայի ֆուտբոլիստների միջև խաղը: Խաղով հետաքրքրվողների համար կազմվել էր անունների և հասցեների ցուցակ: Սակայն ուժեղ սառնամանիքի պատճառով ստիպված էին խաղերը հետաձգել, և այն տեղի ունեցավ 1870 թ. մարտի 5-ին: 1870 թ. նոյեմբերից մինչև 1872 թ. փետրվար ընկած ժամանակահատվածում թիմերը, որոնք կազմված էին Լոնդոնում և նրա մերձակայքում աշխատող անգլիացիներից և շոտլանդացիներից, հանդիպել են չորս անգամ:

Գլազգոյի «Քուինզ Փառկ» ակումբը հանդես եկավ առաջարկությամբ, որ խաղերից մեկը տեղի ունենա 1872-1873 թթ. Գլազգոյում: Եվ 1872 թ. նոյեմբերին կայացավ Անգլիայի և Շոտլանդիայի հավաքականների առաջին միջազգային պաշտոնական հանդիպումը, որը ավարտվեց զրոյական ոչ ոքիով :

1882 թ. գոյություն ունեին 4 ֆուտբոլային ասոցիացիաներ՝ Անգլիայի, Շոտլանդիայի, Ուելսի և Իռլանդիայի: Այդ կազմակերպությունները նույն թվականին ստեղծեցին Ֆուտբոլի միջազգային ասոցիացիայի խորհուրդ, որը պետք է հսկեր կանոնների փոփոխությունները: 1883-1884 թթ. խաղաշրջաններից սկսած բրիտանական օրացույցի մաս դարձավ Մեծ Բրիտանիայի մրցաշարը, որին մասնակցել էին այդ չորս երկրների հավաքականները:

Ֆուտբոլը դպրոցում: Նոր սպորտային խաղը ծնվել է մասնավորապես ուսումնական հաստատություններում: Սակայն բրիտանացի երեխաների մեծամասնությունը կրթությունը ստանում էր տարրական դպրոցներում, որտեղ ֆիզիկական վարժանքի միակ տեսակը շարային պատրաստությունն էր: Դպրոցների, համալսարանների, քոլեջների երիտասարդ ուսուցիչները դասից ազատ ժամերին սկսեցին ֆուտբոլ խաղալ: Պարզվեց, որ ֆուտբոլը հեշտ խաղ է և ֆիզիկապես մարզվելու գրավիչ միջոց է, որը լիովի հարմար է նաև անապահով ընտանիքների տղաների համար:

1882 թ. 23 դպրոցներ արդեն ունեին ֆուտբոլային ակումբներ, որտեղ պարապում էին հազարից ավել երեխաներ: Սուինդոն քաղաքների արխիվներում կան փաստեր այն մասին, որ 1886 թ. տեղական ուսուցիչներն իրենց սաների հետ դասերց հետո

ֆուտբոլ էին խաղում, իսկ 1886 թ. թվաբանության հանձնարարություններում օգտագործում էին հանրաճանաչ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների անունները:

1884 թ. «Պրեստոն Նորտ Էնդ» ակումբը մրցանակ սահմանեց, որի համար մրցելու էին պրեստոնյան դպրոցի թիմերը, իսկ 1890-ական թթ. սկզբին այդպիսի մրցումները կազմակերպված բնույթ ստացան:

1904 թթ. սահմանվել է Դպրոցական ֆուտբոլի անգլիական ասոցիացիան, որն արդեն հաջորդ տարի իրականացրեց գավաթի համազգային մրցաշար: 1906 թ. Մեծ Բրիտանիայի Կրթության նախարարությունը ֆուտբոլը պաշտոնապես ներառեց պետական տարրական դպրոցներում:

1.3 Ֆուտբոլը առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին

Առաջին համաշխարհային պատերազմից հետո երկրների մեծամասնությունը, որտեղ մինչև 1917 թ. ֆուտբոլն արդեն առօրէական էր դարձել, այն զանգվածային տարածում ստացավ: Հարավային Ամերիկայում այս պատերազմը պայմանավորված էր ինդուստրիալիզացման թռիչքով, Ռուսաստանում, բացի այդ նաև հոկտեմբերյան հեղափոխությամբ, որը ստիպում էր ընդլայնել սոցիալական բազան: Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում հենց Առաջին համարաշխարհային պատերազմը վճռական իմպուլս հաղորդեց խաղի զարգացմանը: Բոլոր մասնակից բանակները անցկացնում էին մրցումներ և ստեղծեցին մարզումների կանոնավոր համակարգ [7]:

Տեղի ունեցավ մակարդակների տարբերակում: Մեծ քաղաքներում ձևավորվեցին էքստրա մակարդակի մրցումներ: Դիտողների թիվը հասնում էր տասնյակ հազարների, որի արդյունքում Հարավային Ամերիկայի և Եվրոպայի ֆուտբոլային մարզադաշտերի մեծամասնությունը (ներառյալ Լոնդոնի Wembley մարզադաշտը) առաջացել են Առաջին համարաշխարհային պատերազմից հետո ընկած այդ ժամանակաշրջանում:

Սպորտային շարժումն ակտիվացավ Կենտրոնական Եվրոպայում և Հարավային Ամերիկայում: Ակումբները կանչում էին օտարերկյա թիմերը՝ մեծ մարզադաշտերը լցնելու համար և նրա համար, որ կարողանային վճարել հիպոտեկը, այդ թիմերը ուղևորվում էին արտասահմանյան մրցաշարերի: Բացի այդ առաջացան միջազգային մրցաշարեր: Հարավամերիկյան ֆուտբոլային երկրները, որոնք արդեն 1816 թ.

միավորվել էին հարավ-ամերիկյան ֆուտբոլային կոնֆեդերացիայի մեջ (Confederación Sudamericana de Fútbol — CONMEBOL), 1920 թ. պայքարում էին գավաթի համար, իսկ 1922 թ. Հարավայի Ամերիկայի առաջնության համար: Համաշխարհային պատերազմի ժամանակ պարտություն կրած եվրոպական երկրները, որոնց բոյկոտել էին հաղթող երկրները և թույլ չէին տվել Օլիմպիական խաղերին մասնակցել, և իրենց հերթին, կազմակերպել էին ակումբային թիմերի միջազգային ֆուտբոլային մրցաշարը, 1927 թ. Միտրոպի Գավաթի (Mitropa-Cup և 1929 թ. Բալկանի ու Բալտիկի (Balkan- und Baltic-Cup) գավաթի համար:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլի հաստատումը տեղի է ունեցել եվրոպական երկրների մեծամասնություններում (որում բացառություն էր Գերմանիան) 30-ական թթ. սկզբին, այսինքն 40 տարով ուշ, քան «հայրենիքում»՝ Անգլիայում: Դրա համար առաջին իմպուլսը եղավ արդյունաբերական ճգնաժամը և դրա հետ կապված գործազրկությունը: Երկրորդ իմպուլսը դարձավ 1930 թ. սիրողական կարգավաճակի վերաբերյալ ՄՕԿ-ի հետ տարաձայնություններից հետո. ՖԻՖԱ-ն կարճ ժամանակահատվածում որոշեց կազմակերպել ֆուտբոլի աշխարհի առաջնություն: Առաջին մրցաշարը, որը նույն թվականին խոշոր ծախսերով կազմակերպվեց Ուրուգվայում, անդրադարձավ բոլոր «ֆուտբոլային ազգերին», անկախ այն բանից, թե նրանց թիմը ներկայացված է եղել, թե ոչ: Աշխարհի մրցաշարն ընդլայնեց նախկինում միայն Եվրոպայով սահմանափակված միջազգային խաղերը, որը հանգեցրեց նրան, որ առաջին հերթին Հարավ-Աֆրիկյան երկրներում, որոնք ֆինանսական սուղ միջոցներ ունեին, առաջացան էքստրա դասի խաղացողներ: Ֆուտբոլը դարձրեցին վճարովի, որպեսզի ֆուտբոլային աստղերը մնային երկրում [8]: Այդ ֆուտբոլիստների տեղափոխությունները իրենց հերթին ազդեցին խաղի ձևի վրա, ընդ որում արգենտինա-իտալական անդրատլանտյան «կապը» առանձնահատուկ արդյունավետ եղավ:

1920-ից 1930 թ. սկսած ֆուտբոլը ընդլայնվում էր համաձայն սեփական դինամիկայի և դարձավ sui generis-ի գործոն: Մի կողմից Ստալինի ժամանակ Խորհրդային Միությունում և «անշլիուսի» ժամանակ Ավստրիայում՝ Նացիստական Գերմանիայի հետ տեղի էին ունենում ամենաթողություններ և նույնիսկ սպանություններ: Իսկ մյուս կողմից, սպորտային շարժումն այնտեղ, ինչպես ֆաշիստական Իտալիայում, ծաղկում էր ոչ միայն հակառակ, այլև հատկապես «վերևից» միջամտության շնորհիվ.

Միապետները կառուցում էին մարզադաշտեր, միջոցներ էին տրամադրում մարզական ճամբարներ ստեղծելու վրա և քաղաքական կազմակերպությունների միջոցով հավաքում էին մեծ քանակով հանդիսատեսներ: Հենց դրանով է բացատրվում այն, որ ուրիշ երկրները, որոնք միջռազմական ժամանակ պահպանել էին ժողովրդավարությունը և որոնցում ֆուտբոլը որպես սպորտ դիտվում էր ինչպես մասնավոր աշխատանք, մասնավորապես Ֆրանսիան, Շվեյցարիան, ԱՄՆ-ն, Ավստրալիան և Մեծ Բրիտանիան, արդեն հետ էին մղվել: Որպես հետևանք, 1928 թ. անգլիական ՖԱ-ն՝ որպես բողոք ընդդեմ ֆուտբոլի քաղաքականացման (ինչպես նաև սիրողական խաղերի կանոնների հետ ազատ վարվելուն էր դեմ), նույնիսկ դուրս եկավ Միջազգային ֆուտբոլի միության ՝ ՖԻՖԱ-ից, այնպես որ ժամանակակից ֆուտբոլի «հայրենիքը» միջազգային իմաստով մեկուսացման մեջ ընկավ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939 թ.-ից 1945 թ. միջև) խաղային շարժումը Եվրոպայում գնալով սահմանափակ էր դառնում, իսկ հետագայում լիովին անկում ապրեց: Ի հակադրություն դրան, ոչ եվրոպական երկրներում անընդմեջ զարգացում էր գնում, նրա շնորհիվ, որ այդ երկրները ընդհանրապես չէին մասնակցել համաշխարհային պատերազմին կամ էլ ամենաքիչը չեզոք դիրք էին պահպանել: Դրա հետևանքով առաջին հերթին հաղթեց հարավ-ամերիկյան ֆուտբոլը: Իրենց զարգացման արդյունքը երևաց ոչ միայն խաղադաշտում, որտեղ 1950 թ. աշխարհի մրցաշարում Բրազիլիան և Ուրուգվայը հակադրության մեջ էին, այլ նաև սպորտային քաղաքականության մեջ. 1945թ.-ից 1950թ. ընթացքում եվրոպական ֆուտբոլային միությունների տոկոսը ՖԻՖԱ-յում պակասեց՝ 52 %- հասնելով 42 %-ի:

Այդ պատճառով Գլխավոր Ասամբլեաներում Հարավային Ամերիկայի պատվիրակները հեշտությամբ հակադրվեցին եվրոպական պատվիրակներին սեփական ձայների մեծամասնությամբ, հատուկ այն ժամանակ, երբ CONMEBOL-ը կազմակերպեց քվեարկությունը ըստ բլոկների: Հիմնականում այդ փորձի ազդեցությամբ էր, որ ՖԻՖԱ-ի եվրոպական ֆուտբոլի առաջատար գործիչները 50 ական թթ. գիտակցեցին անկախ կոնֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը: 1955 թ. ստեղծվեց Ֆուտբոլային ասոցիացիայի եվրոպական միությունը (Union des Associations Européennes de Football— UEFA) [9]:

1.4 Ֆուտբոլը աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը անցկացվում է 4 տարին 1 անգամ: Առաջին անգամ անցկացվել է 1930 թ.: 1942 և 1946 թթ. աշխարհի առաջնություն չի անցկացվել Երկրորդ Աշխարհամարտի պատճառով: Մինչև այժմ անցկացվել է աշխարհի առաջ-նության 20 խաղարկություն, որոնց ընթացքում հինգ անգամ ֆուտբոլի աշխարհի չեմպիոն են ճանաչվել Բրազիլիայի (1958, 1962, 1970, 1994, 2002), չորսական անգամ՝ Գերմանիայի (1954, 1974, 1990, 2014) և Իտալիայի (1934, 1938, 1982, 2006), երեք անգամ Արգենտինայի (1978, 1986, 2022), երկուական անգամ՝ Ուրուգվայի (1930, 1950) և Ֆրանսիայի (1998, 2018), մեկական անգամ՝ Անգլիայի (1966) և Իսպանիայի (2010) ազգային հավաքականները:

Աղյուսակ 1

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունների անցկացման

Տարի	Խաղերի անցկացման վայր	Չեմպիոն	2-րդ տեղ գրավողներ	3-րդ տեղ գրավողներ
1930	Ուրուգվայ	Ուրուգվայ	Արգենտինա	ԱՄՆ
1934	Իտալիա	Իտալիա	Չեխոսլովակիա	Գերմանիա
1938	Ֆրանսիա	Իտալիա	Հունգարիա	Բրազիլիա
1950	Բրազիլիա	Ուրուգվայ	Բրազիլիա	Շվեդիա
1954	Շվեյցարիա	Գերմանիա	Հունգարիա	Ավստրիա
1958	Շվեդիա	Բրազիլիա	Շվեդիա	Ֆրանսիա
1962	Չիլի	Բրազիլիա	Չեխոսլովակիա	Չիլի
1966	Անգլիա	Անգլիա	Գերմանիա	Պորտուգալիա
1970	Մեքսիկա	Բրազիլիա	Իտալիա	Գերմանիա
1974	Գերմանիա	Գերմանիա	Հոլանդիա	Լեհաստան
1978	Արգենտինա	Արգենտինա	Հոլանդիա	Բրազիլիա
1982	Իսպանիա	Իտալիա	Գերմանիա	Լեհաստան
1986	Մեքսիկա	Արգենտինա	Գերմանիա	Ֆրանսիա
1990	Իտալիա	Գերմանիա	Արգենտինա	Իտալիա
1994	ԱՄՆ	Բրազիլիա	Իտալիա	Շվեդիա

Տարի	Խաղերի անցկացման վայր	Չեմպիոն	2-րդ տեղ գրավողներ	3-րդ տեղ գրավողներ
1998	Ֆրանսիա	Ֆրանսիա	Բրազիլիա	Խորվաթիա
2002	Ճապոնիա/Կորեա	Բրազիլիա	Գերմանիա	Թուրքիա
2006	Գերմանիա	Իտալիա	Ֆրանսիա	Գերմանիա
2010	Հարավաֆրիկյան Հանրապետություն	Իսպանիա	Հոլանդիա	Գերմանիա
2014	Բրազիլիա	Գերմանիա	Արգենտինա	Հոլանդիա
2018	Ռուսաստան	Ֆրանսիա	Խորվաթիա	Բելգիա
2022	Կատար	Արգենտինա	Ֆրանսիա	Խորվաթիա

Աշխարհի առաջնությունը ամենավարկանիշային ֆուտբոլային մրցաշարն է աշխարհում, ամենաշատ դիտվող սպորտային մրցությունն է՝ առաջ անցնելով անգամ օլիմպիական խաղերից: Ընդհանուր առմամբ 2006 թ. աշխարհի առաջնության բոլոր խաղերը միասին վերցված դիտել են 26.29 միլիարդ մարդ, իսկ եզրափակիչը դիտել է աշխարհի բնակչության մեկ իններորդ մասը [10][11][12][13]:

Աշխարհում առաջին միջազգային ֆուտբոլային հանդիպումը կայացել է Գլազգո 1872 թ. Շոտլանդիայի և Անգլիայի միջև և ավարտվել է 0–0 հաշվով[14]: Առաջին միջազգային մրցությունը ամենամյա ֆուտբոլի Մեծ Բրիտանիայի տնային առաջնությունն է, որը անցկացվել է 1884 թ. [15]: Ֆուտբոլի զարգացման հետ մեկտեղ 20-րդ դարի սկզբին առանց մեդալների ֆուտբոլն ընգրկվեց 1900 և 1904 թթ. Օլիմպիական խաղերում [16]:

Երբ ՖԻՖԱ-ն հիմնադրվեց 1904 թ., փորձեց կազմակերպել միջազգային մրցություն Շվեյցարիայում՝ Օլիմպիական խաղերից դուրս 1906 թ.: Քանի որ միջազգային ֆուտբոլը չէր ձևավորվել, այս փորձը անհաջողությամբ պսակվեց [17]:

1908 թ. Լոնդոնի Օլիմպիական խաղերում ֆուտբոլը ճանաչվեց պաշտոնական մրցություն: Այդ ժամանակ խաղում էին միայն սիրողական ֆուտբոլիստներ և խաղերում հաղթեց Անգլիայի հավաքականը, որը կրկնեց հաղթանակը 1912 թվականի խաղերում:

1909 թ. Թոմաս Լիփթոնը կազմակերպեց իր անվամբ մրցաշար Թուրինում: Այս մրցույթում խաղում էին տարբեր երկրների ակումբներ, ոչ հավաքականներ: Այս

մրցությունը հաճախ կոչում են Առաջին աշխարհի գավաթ [18] և ներգրավեց Իտալիայի, Գերմանիայի և Շվեյցարիայի ամենահեղինակավոր ակումբներին, սակայն Անգլիան հրաժարվեց մասնակել: Լիփթոնը հրավիրեց անգլիական Վեստ Օկլենդ Թաուն ակումբին, որը դարձավ առաջնության հաղթող և պաշտպանեց տիտղոսը 1911 թ.:

1914 թ. ՖԻՖԱ-ն համաձայնեց համարել Օլիմպիական առաջնությունը որպես «ֆուտբոլի աշխարհի սիրողական առաջնություն» և վերցրեց իր վրա մրցույթի հսկողությունը [19]: Սա ճանապարհ բացեց աշխարհում առաջին միջմայրցամաքային ֆուտբոլային մրցաշարի 1920 թ. Ամառային օլիմպիական խաղերում, որին մասնակցեց Եգիպտոսը և 13 եվրոպական հավաքական և հաղթող դարձավ Բելգիան [20]: Ուրուգվայը հաղթեց մյուս երկու Օլիմպիական խաղերում:

Օլիմպիական խաղերի ֆուտբոլային առաջնությունների հաջողություններից հետո ՖԻՖԱ նախագահ Ժյուլ Ռիմեն նորից սկսեց մտածել Օլիմպիական խաղերից դուրս սեփական առաջնության մասին: 1928 թ. մայիսի 28-ին Ամստերդամում կայացած ՖԻՖԱ-ի համաժողովում որոշվեց կազմակերպել ինքնուրույն ֆուտբոլի աշխարհի առաջնություն [21]: Քանի որ Ուրուգվայը, որը այդ տարի նշում էր իր անկախության հարյուր ամյակը, որոշվեց Ֆուտբոլի աշխարհի առաջնությունը անցկացնել հենց Ուրուգվայում:

ՖԻՖԱ-ի անդամ մի քանի երկրների ուղարկվեց հրավեր մասնակցելու առաջնությանը, սակայն Եվրոպայի երկրների համար նշանակում էր անցնել Ատլանտյան օվկիանոսը և հասնել Ուրուգվայ: Մրցույթի սկզբից երկու ամիս առաջվա դրությամբ ոչ մի եվրոպական երկիր չէր ընդունել հրավերը: Ռիմեն պահանջեց Բելգիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի և Հարավսլավիայի հավաքականներին մասնակցել առաջնությանը: Ընդհանուր մասնակցեցին 13 երկիր, յոթը՝ Հարավային ամերիկայից, չորսը Եվրոպայից և երկուսը՝ Հյուսիսային Ամերիկայից:

Առաջին երկու խաղերը անցկացվեցին միաժամանակ, Ֆրանսիան և ԱՄՆ-ն հաղթանակ տարան համապատասխանաբար Մեքսիկայի և Բելգիայի հանդեպ: Աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին գոլը հեղինակեց Լուսիեն Լորենը Ֆրանսիայից [22]: Եզրափակչում Ուրուգվայը առավելության հասավ Արգենտինայի նկատմամբ և դարձավ առաջին գավաթակիրը [23]:

Աշխարհի գավաթի հիմնադրումից հետո Ամառային օլիմպիական խաղեր 1932-ը կայացավ Լոս Անջելեսում և նախատեսված չէր անցկացնել ֆուտբոլի մրցություն քանի որ ֆուտբոլը ԱՄՆ-ում ժողովրդականություն չէր վայելում [24]: Օլիմպիական ֆուտբոլը վերադարձավ 1936 թ. Օլիմպիական խաղերում, սակայն ավելի վարկանիշային էր Աշխարհի գավաթը:

Առաջին Աշխարհի առաջնությունները ունեցան ուղևորության և պատերազմի հետ կապված խնդիրներ: Քիչ հարավամերիկյան հավաքականներ ցանկացան ուղևորվել Եվրոպա 1934 և 1938 թթ. առաջնություններին մասնակցելու համար: Բրազիլիան միակ հարավամերիկյան հավաքականն էր, որը մասնակցեց երկուսին: 1942 և 1946 թթ. Առաջնությունները, որոնք պետք է կայանային Նացիստական Գերմանիայում և Բրազիլիայում [25], չեղարկվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի և դրա հետևանքների պատճառով:

ԳԼՈՒԽ 2

ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆուտբոլը Հայաստանում սկզբնավորվել է 20-րդ դարի քսանական թթ., իսկ դարասկզբին, Արևմտյան Հայաստանում՝ Կոստանտինապոլսում, Իզմիրում կազմավորվում են ֆուտբոլային թիմեր, որոնք մրցում էին թուրքական ակումբների և գերմանական ու անգլիական ռազմանավերի նավաստիների հետ: Այդ տարիներին էլ գրանցվում են առաջին հաջողությունները:

Առաջին հայկական ակումբը բացվել էր դեռ 1900թ. Զմյուռնիայում: Դրանք էին՝ «Բալթա–Լիման», «Արաքս», «Տորք», «Հայաստան», «Վասպուրական», «Կիլիկիա», «Արարատ», «Համազասպ» և այլն: ՀԽՍՀ-ում ֆուտբոլը տարածվել է 1920-ական թ.: Ակումբները գործել են Ալեքսանդրապոլում կամ Լենինականում, Էջմիածինում, Երևանում: 1920 թ. Երևանի անգլիական այգում տեղի է ունեցել ֆուտբոլի առաջին խաղը Երևանի և Ալեքսանդրապոլի թիմերի միջև: Միջազգային առաջին խաղը տեղի է ունեցել 1930 թ. Երևանի և Գերմանիայի բանվորական միության թիմերի միջև: 1939 թ. անցկացվում է հանրապետական պաշտոնական առաջնություն, նույն թվականից Սպարտակը (1937-1954 թ.՝ Դինամո, 1963 թ.՝ Արարատ) իրավունք է ստացել մասնակցելու համամիութենական առաջնության Բ խմբի մրցումներին: Արարատը 1973 և 1975 թթ. նվաճել է ԽՍՀՄ գավաթը: 1991 թ. սկսած՝ անցկացվում են Հայաստանի ֆուտբոլի ազգային առաջնության հանդիպումներ:

Մինչ Առաջին համաշխարհային պատերազմը ֆուտբոլային հայկական ակումբներ են ստեղծվել նաև Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի խոշոր քաղաքներում:

1911 թ. Կ.Պոլսի «Հայաստան» ակումբը դարձել է Հունաստանի ֆուտբոլային ֆեդերացիայի կողմից կազմակերպված միջազգային մրցաշարի հաղթողը, իսկ 1913 թ. Օսմանյան կայսրության ուսումնական հաստատությունների մրցաշարում «Կիլիկիան» զբաղեցրեց առաջին տեղը:

Հայերի և թուրքերի միջև կայացած առաջին պաշտոնական հանդիպումը տեղի է ունեցել 1906 թ. ամռանը, որի ժամանակ Կ.Պոլսի «Բալթա–Լիման» 5:0 հաշվով ջախջախիչ հաղթանակ է տարել թուրքական «Գալաթասարայ»–ի նկատմամբ, որից հետո

«Բալթա–Լիման» բաժանվեց «Արաքս»–ի և «Տորք»–ի։ «Արաքսը դարձավ լավագույն հայկական ակումբը, որը իր մարզումներն անցկացնում էր Կ.Պոլսի Շիշլի թաղամասի «Ազատության բլուրում»։ Թիմը մեծ համբավ էր ձեռք բերել և հաճախ ուրախացնում էր իր երկրպագուներին հաղթանակներով։

1918 թ. Հայաստանի Ալեքսանդրապոլ, Վաղարշապատ և Երևան քաղաքներում սկսեցին գործել ֆուտբոլային ակումբներ։

Հայկական թիմերի առաջին պաշտոնական հանդիպումը տեղի է ունեցել 1920 թվականի մայիսի 28-ին Երևանի և Ալեքսանդրապոլի միջև՝ Երևանի Անգլիական այգում։

Հայկական ֆուտբոլի զարգացման գործում շրջադարձային եղավ 1924 թ., երբ հոկտեմբերի 13-ին Բաթումի նավահանգստում խարիսխ գցեց «Չիչերին» շոգենավը, որով մայր Հայաստան էին վերադառնում թուրքական եղեռնից մազապուրծ եղած հայ գաղթականները։ Այդ օրը Բաթումի խաղադաշտում կայացավ ֆուտբոլային մի յուրօրինակ հանդիպում, որի արդյունքն իսկական անակնկալ էր խաղը դիտած հանդիսականների համար։ Հայ գաղթականներից կազմավորված թիմը 2-1 հաշվով հաղթեց այն տարիներին Անդրկովկասում ուժեղագույնների թվին դասվող Բաթումի դինամոյականներին։

20-ական թթ. ֆուտբոլային թիմեր ստեղծվեցին նաև հանրապետության այլ քաղաքներում ու շրջաններում։ Ավանդական դարձավ Երևանի և Ալեքսանդրապոլի (ներկայիս Գյումրին) թիմերի միջև ընկերական հանդիպումների անցկացումը։

Հայկական ֆուտբոլի տարեգրությունում հատկապես հիշարժան է 1930 թ.։ Մայիսին Երևանի հավաքականն ընդունեց Մոսկվայի ուժեղ թիմին և խաղն ավարտեց ոչ ոքի (0-0), իսկ սեպտեմբերի 21-ին կայացավ հայկական ֆուտբոլի պատմության մեջ միջազգային առաջին հանդիպումը։ Մեր ֆուտբոլիստների հյուրն էր Գերմանիայի բանվորական միության ֆուտբոլի հավաքականը։ Միջազգային առաջին հանդիպումը նշանակալից իրադարձություն էր Հայաստանի մարզական կյանքում և մեծ հետաքրքրություն էր առաջացրել։ Նույնիսկ այդ հանդիպման առթիվ հատուկ հուշամեդալ էր պատրաստվել։

1931թ. «Դինամո» մարզական ընկերությունը Երևանում ֆուտբոլի մարզադաշտ կառուցելու հարցով դիմեց Հայաստանի Ժողկոմխորհին, որի որոշմամբ «Դինամո»

մարզադաշտի (ներկայիս «Հանրապետական» մարզադաշտը) շինարարության համար քաղխորհուրդը Երևանի կենտրոնում 16 հա տարածք հատկացրեց: Մարզադաշտի շինարարական հիմնական աշխատանքներն սկսվեցին 1933թ. և արդեն 2 տարի անց խաղադաշտը շահագործման հանձվեց: 1935թ. հունիսին «Դինամո» մարզադաշտի բացման կապակցությամբ Երևանի «Սպարտակի» և Մոսկվայի ԿԲԿՏ-ի միջև ֆուտբոլային հանդիպում անցկացվեց: «Սպարտակը» 1-3 հաշվով զիջեց ահեղ մրցակցին:

1935թ. հայկական ֆուտբոլի տարեգրությունում նշանակալից էր նրանով, որ առաջին անգամ Երևանի հավաքականը մասնակցեց ֆուտբոլի ԽՍՀՄ առաջնությանը (մինչև 1936թ. համամիութենական առաջնություններն անցկացվում էին քաղաքների հավաքականների միջև): Մեր ֆուտբոլիստները հանդես եկան 2-րդ խմբի 8-րդ ենթախմբում, որտեղ նրանց մրցակիցներն էին Պյատիգորսկի, Կրասնոդարի և Մախաչկալայի թիմերը:

1936թ. անցկացվեց ֆուտբոլի Հայաստանի անդրանիկ առաջնությունը, ինչը նշանակալից իրադարձություն էր հանրապետության ֆուտբոլային կյանքում: Վեց թիմերի մրցավեճում Հայաստանի չեմպիոնի տիտղոսին արժանացավ Երևանի «Դինամոն»: 2-րդ տեղը գրավեց «Սպարտակը», մրցանակային 3-րդ տեղը՝ «Ստրոիտելը»:

1938թ. հոկտեմբերի 6-ին Հայաստանի Ժողկոմխորհին առընթեր ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեի նախագահ Զ. Մարտիրոսյանի հրամանով «Սպարտակի» բազայի վրա կազմավորվեց վարպետների առաջին թիմը: Այդ լուրը մեծ ոգևորություն էր առաջացրել մարզական ընկերություններում, որոնք իրենց առաջատար ֆուտբոլիստներին գործուղեցին «Սպարտակ»: Մասնավորապես, Երեվանի «Դինամոյից» «Սպարտակ» տեղափոխվեց Բագրատ Հայկյանը, Խարկովի «Սպարտակից» հրավիրվեց դարպասապահ Վասիլի Դևլյաշովը, Մոսկվայի «Լոկոմոտիվից» Երևան վերադարձավ Հայկ Անդրեասյանը, Մոսկվայի «Ստալինեցից»՝ Գեորգի Բոգդանովը, Դնեպրոպետրովսկի «Ստալից»՝ Նիկոլայ Կլեցկինը:

Հայրենական Մեծ պատերազմի ավարտից հետո երկրի մարզադաշտերում կրկին վերսկսվեցին ֆուտբոլային «ճակատամարտերը»: «Կարմիր սպորտի» մայիսի 1-ի համարում առաջին հաղորդագրությունը տպագրվեց առաջնության անցկացման վերաբերյալ: Առաջին խմբի մրցումները մեկնարկելու էին մայիսի 13-ին, իսկ երկրորդ

խմբի մրցաշարը, որում ընդգրկված էր Երևանի «Դինամոն», սկսվելու էր հունիսի 3-ին: Այդ օրը Երևանի «Դինամո» մարզադաշտում մեր ֆուտբոլիստները մրցեցին Բաքվի իրենց ակումբակիցների հետ: Խաղն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Հաշիվը բացեց բաքվեցիների հարձակվող Արտյոմ Մարգարովը (Էդուարդ Մարգարովի հայրը): Պատասխան գնդակը խփեց Հայկ Անդրեասյանը: «Դինամոն» միայն 5-րդ տուրում իր անդրանիկ հաղթանակը տոնեց 2-0 հաշվով պարտության մատնելով Օդեսայի «Պիշչևիկին»: Կրկին զգացնել տվեց մրցակիցների դաշտերում պայքարելու մեր ֆուտբոլիստների անկարողությունը: 1945թ. առաջնությունում դինամոյականները 17 հանդիպումներում տոնեցին 5 հաղթանակ, 4 խաղ ավարտեցին ոչ-ոքի, կրեցին 8 պարտություն, խփած և բաց թողած գնդակների 24-31 տարբերությամբ 18 թիմերի մրցավեճում զբաղեցրին 12-րդ տեղը:

1949 թ. հայկական ֆուտբոլի տարեգրությունում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Այդ տարի կայացավ Երևանի «Դինամոյի» նորամուտը «Ա» խմբում (բարձրագույն խումբ): Դա, ինչ խոսք, նշանակալից իրադարձություն էր հանրապետության ֆուտբոլային կյանքում: Իրականացել էր ֆուտբոլիստների և նրանց բազմահազար երկրպագուների վաղեմի երազանքը: Ուրախությունն անսահման էր, հուզող հարցերը՝ շատ: Բոլորն էին հասկանում, որ ուժեղագույների խմբում հաջողությամբ հանդես գալու համար անհրաժեշտ էր նախևառաջ մարտունակ ֆուտբոլային կոլեկտիվ ստեղծել: «Դինամոն» զգալի համալրում ստացավ: Երևանի «Սպարտակից» թիմ հրավիրվեցին դարպասապահ Սերգեյ Զատիկյանն ու պաշտպան Վասիլի Սարգսյանը: Թբիլիսիի «Սպարտակից» Երևան եկավ մեկ այլ պաշտպան՝ Վախթանգ Սարգսյանը, որն աթլետիկ կազմվածքով, ֆիզիկապես ուժեղ ֆուտբոլիստ էր: Սակայն, ցավոք, թե Վախթանգը, թե Վասիլին լուրջ վնասվածքներ ստացան և շատ քիչ հանդիպումների մասնակցեցին:

1954թ. երևանցիները հանդես եկան «Սպարտակ» մարզակումբի դրոշի ներքո: Անվանափոխության առաջին իսկ տարում երևանցիները հմուտ մարզիչ Հայկ Անդրեասյանի գլխավորությամբ նշանակալի հաջողությունների հասան թե առաջնությունում, թե գավաթի մրցաշարում:

1959թ. երևանցիներին վերջապես հաջողվեց նվաճել բարձրագույն խմբի ուղեգիրը: «Սպարտակը» գերազանց անցկացրեց ողջ մրցաշրջանը: Մեկնարկում տոնելով

8 անընդմեջ հաղթանակ, սպարտակցիներն առաջին իսկ տուրից գլխավորեցին մրցաշարային աղյուսակը և մինչև առաջնության ավարտը առաջատարի դիրքը չզիջեցին ոչ մեկին: Թիմը կրեց ընդամենը մեկ պարտություն և վստահորեն գրավեց առաջին տեղը՝ 6 միավորով առաջ անցնելով 2-րդ տեղը զբաղեցրած «Թերեքից»: 1959թ. առաջնության վերջնագծում երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահությունը որոշում կայացրեց ընդլայնելու բարձրագույն խմբի «աշխարհագրություն» հաջորդ տարի «Ա» խմբում հանդես գալու իրավունք տալով Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսիայի, Ուզբեկստանի, Ղազախստանի և Մերձբալթյան հանրապետությունների լավագույն թիմերին: Չնայած դրան, երևանցիները չթուլացրին իրենց տեմպը, շարունակեցին իրենց հաջող մրցելույթները և ապացուցեցին, որ արժանիորեն են ստացել ուժեղագույների խմբում հանդես գալու իրավունքը:

1962թ. Սպարտակը անվանափոխվեց Արարատի: 1964թ. «Արարատը» գլխավորեց Գեորգի Ժարկովը: Տարբեր պատճառներով իրենց տեխնիկական ցուցանիշները նվազեցրած 15 ֆուտբոլիստներ հեռացվեցին կոլեկտիվից: «Սպարտակի» կազմը համալրեցին Շիրակից հրավիրված դարպասապահ Ալյոշա Աբրահամյանը, հարձակվող Անատոլի Զիրոյանը, ինչպես նաեւ ֆուտբոլի դպրոցի երիտասարդ սաները: Համալրումն, անտարակույս, նոր լիցք ու թարմություն հաղորդեց թիմի գործողություններին, բայց տեխնիկական անբավարար պատրաստականությունը, թերի մարզվածությունը, փորձի պակասն իրենց բացասական կնիքը թողեցին: 1968թ. «Արարատը» Էդուարդ Գրիգորյանի գլխավորությամբ անհաջող հանդես եկավ՝ գրավելով 16-րդ տեղը: 1969թ. թիմի ավագ մարզիչ նշանակվեց խորհրդային ֆուտբոլի փառաբանված վարպետներից մեկը՝ Ալեքսանդր Պոնոմարյովը: Նա մեծ ուշադրություն դարձրեց կոլեկտիվ խաղի կազմակերպմանը, հստակորեն որոշեց թիմի տակտիկան: Երկրի առաջնությունն անցկացվում էր նոր մրցակարգով: 1971թ. օլիմպիական հավաքականի ավագ մարզիչ նշանակվելու պատճառով Ալեքսանդր Պոնոմարյովը հրաժեշտ տվեց «Արարատին»: Նրան փոխարինեց երկրի ճանաչված մասնագետներից մեկը՝ Նիկոլայ Գլեբովը: Բաքվի «Նեֆչիից» Երևան տեղափոխվեց ռմբարկուի համբավ ունեցող Էդուարդ Մարգարովը, հանձին որի «Արարատը» Հովիվյանից հետո ունեցավ վառ կենտրոնական հարձակվող: Գլեբովին հաջողվեց իր սաներին հավատ ներշնչել սեփական ուժերի նկատմամբ: 1973թ. «Արարատին» մարզելու հրավիրվեց սպորտի

վաստակավոր վարպետ, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Նիկիտա Սիմոնյանը: Նա իր սաների հետ ապացուցեց, որ «Արարատն» ի վիճակի է նվաճելու խորհրդային ֆուտբոլի բարձունքները: Մրցաշրջան-73-ն իրոք ոսկե տառերով գրվեց հայկական ֆուտբոլի տարեգրությունում: Իր պատմության մեջ առաջին անգամ «Արարատը» դարձավ և երկրի չեմպիոն, և ԽՍՀՄ գավաթակիր:

2.1 ՀՖՖ-ի ստեղծումը և գործունեությունը

ԽՍՀՄ փլուզումից հետո անկախություն ձեռք բերած բոլոր հանրապետություններում ստեղծվեցին ֆուտբոլի ազգային ֆեդերացիաներ: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հայկական ֆուտբոլը կառավարող մարմին է, որը հիմնադրվեց 1992 թ. հունվարի 18-ին, իսկ ՀՖՖ առաջին նախագահ դարձավ Նիկոլայ Ղազարյանը: Նույն թվականին ՀՖՖ-ն անդամագրվեց ՈՒԵՖԱ-ին, իսկ հուլիսի 3-ին՝ նաև ՖԻՖԱ-ին: ՀՖՖ-ի հիմնական խնդիրներն են երկրում ֆուտբոլի տարածումը, զարգացումը, զանգվածային և մանկապատանեկան ֆուտբոլի կազմակերպման ապահովումը, ֆուտբոլիստների վարպետության բարձրացումը, մրցավարների, մարզիչների, մարզիկների բարոյական բարձր հատկանիշների դաստիարակումը, հանրապետության մրցումների կազմակերպումն ու անցկացումը, այդ համակարգերի կատարելագործումը, հայրենական ֆուտբոլի նյութատեխնիկական բազայի զարգացմանը նպաստելը:

ՀՖՖ-ն մշակում է հանրապետությունում ֆուտբոլի զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրեր, կազմակերպում հանրապետության հավաքական թիմերի նախապատրաստումը միջազգային տարբեր մրցումների: ՀՖՖ-ն միավորում է մարզային ֆեդերացիաները, ֆուտբոլի ակումբները, մարզադպրոցները, մարզակենտրոնները, բաժանմունքները, համագործակցում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ:

ՀՖՖ բարձրագույն մարմինը համագումարն է, որը 4 տարով ընտրում է նախագահ և գործադիր կոմիտեի անդամներ:

Աշխատանքային մարմինը գործկոմն է: Հրատապ խնդիրներ լուծելու համար ստեղծվել է գործկոմի բյուրո: Ֆուտբոլի զարգացման հարցերի կարգավորման, ընդունված որոշումների կատարման ընթացքը հսկելու, գործկոմին առաջարկներ ներկայացնելու համար ստեղծվել են բաժիններ (զանգվածային, մրցավարական, պատա-

նեկան, միջազգային կապեր և այլն)։ Ֆեդերացիայում գործում է բաժանմունք, որի գործունեությունը նպատակաուղղված է կանանց ֆուտբոլին [26]։

Հայաստանի ազգային հավաքականի պատմությունն սկսվում է 1992 թ. հոկտեմբերի 14-ին, երբ Հայաստանը խաղում է Մոլդովայի հավաքականի դեմ։ «Հրազդան» մարզադաշտում տեղի ունեցած մրցավեճում առաջին անգամ Հայաստանի հավաքականի մարզաշապիկով խաղադաշտ դուրս եկած ֆուտբոլիստներն էին Հարություն Աբրահամյանը, Արմեն Շահգելդյանը, Վարդան Խաչատրյանը, Երվանդ Կրբաշյանը, Սարգիս Կարապետյանը, Սարգիս Հովսեփյանը, Արտաշես Ադամյանը, Արամայիս Տոնոյանը, Արսեն Ավետիսյանը, Սամվել Կոստանդյանը, Մկրտիչ Հովհաննիսյանը։ Թիմի ավագն էր Վարդան Խաչատրյանը։ Հանդիպման ընթացքում ոչ մի գոլ չի արձնագրվում, և խաղն ավարտվում է ոչ-ոքի՝ 0:0 [27]։ 1996 թ. Հայաստանի հավաքականը դառնում է Եվրոպայի և աշխարհի առաջնությունների որակավորման փուլերի մասնակից։ 1994 թ. սկսած Հայաստանը մասնակցել է ՈՒԵՖԱ Եվրոպայի Լիգայի ու ՖԻՖԱ Աշխարհի առաջնության բոլոր որակավորման փուլերին։ Առաջին ֆուտբոլիստը, ով գոլի հեղինակ դարձավ Հայաստանի հավաքականի կազմում, դարձավ Արսեն Ավետիսյանը՝ 1994 թ. հուլիսի 16-ին ընկերական խաղում գրավելով Մալթայի հավաքականի դարպասը։ 1994 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի հավաքականն անցկացրեց իր առաջին պաշտոնական հանդիպումը՝ Եվրո-96-ի ընտրական փուլի շրջանակներում մրցելով Բելգիայի հավաքականի հետ։ Բրյուսելում տեղի ունեցած խաղում մեր ընտրանին պարտվեց 0-2 հաշվով, իսկ պաշտոնական խաղերում մեր դարպասը խփած առաջին գոլի հեղինակը դարձավ Երվանդ Կրբաշյանը՝ գրավելով սեփական դարպասը։ Ընդհանուր առմամբ, Էդուարդ Մարգարովի գլխավորությամբ Հայաստանի հավաքականն անցկացրեց 6 հանդիպում՝հաղթելով 1, ոչ-ոքի խաղալով 2 և պարտվելով 3 խաղում։ 1995 թ. Հայաստանի հավաքականի ղեկին նրան փոխարինեց Սամվել Դարբինյանը։ Հենց նրա օրոք Հայաստանի հավաքականը խփեց պաշտոնական խաղերում իր առաջին գնդակը։ 1995 թ. մայիսի 10-ին Մակեդոնիայի հավաքականի հետ մրցավեճում գոլի հեղինակ դարձավ Ռազմիկ Գրիգորյանը։ Եվրո-96-ի ընտրական շրջափուլն այնքան էլ հաջող չդասավորվեց Հայաստանի հավաքականի համար մի շարք պատճառներով։ Երկիրը գտնվում էր հետպատերազմյան շրջանում։ Բազմաթիվ դժվարություններ կային կազմակերպչական հարցերում։ Գրեթե յուրա-

քանչյուր խաղի հավաքականը հանդես էր գալիս տարբեր գույնի և դիզայնի մարզահագուստով: Խաղացողների մեծ մասի մոտ զգացվում էր միջազգային բարձր մակարդակի հանդիպումներին մասնակցելու փորձի պակասը:

Հայաստանի ազգային հավաքականի առաջին գլխավոր մարզիչն է եղել Խորհրդային Հայաստանի ֆուտբոլի աստղ Էդուարդ Մարգարովը: Աշխարհի 1998 թ. առաջնության ընտրական փուլից առաջ, Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ նշանակվեց ՈՒԵՖԱ-ի հոբելյանական մրցանակի դափնեկիր և նախկին ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանը: Սկզբնական շրջանում հավաքականի մարզիչներից շատերն այդ պաշտոնում մնում էին երկու տարուց ոչ ավելի: Աշխարհի 2002 թ. առաջնության ընտրական փուլը Հայաստանի հավաքականն սկսեց արդեն Վարուժան Սուքիասյանի գլխավորությամբ: Հեռուստատեսությամբ սկսվեցին ցուցադրվել Հայաստանի հավաքականի արտագնա հանդիպումները: Հայաստանի հավաքականը կարողացավ ոչ-ոքի ավարտել առաջին իսկ հանդիպումն այն ժամանակ եվրոպայի ուժեղագույն հավաքականներից մեկը համարվող Նորվեգիայի ընտրանու հետ: Թվում էր՝ մեր ընտրանին վերջապես կկարողանա հավակնել խմբում բարձր տեղ գրավելուն, սակայն այդ ընտրական փուլն արդյունքում դարձավ ամենաանհաջողը հավաքականի պատմության մեջ և միակը, երբ մեր թիմը չկարողացավ տանել ոչ մի հաղթանակ:

2004 թ. Հայաստանի հավաքականի պաշտոնական գործընկեր դարձավ Hummel ընկերությունը: 2006 թ. Աշխարհի առաջնության ընտրական փուլը Հայաստանի հավաքականն սկսեց ֆրանսիացի Բեռնար Կազոնիի գլխավորությամբ, որին 2005 թ. փոխարինեց հոլանդացի Հենկ Վիսմանը: Չնայած մեր հավաքականը վաստակեց 7 միավոր, սակայն խաղի առումով այս շրջափուլն ամենաանհաջողներից մեկն էր:

2008 թ. Հայաստանի հավաքականի մարզիչ է դառնում շոտլանդացի Իան Պորտերֆիլդը, ում շնորհիվ թիմը հասնում է իր առաջին հաջողություններին: Հայաստանի հավաքականն անցկացնում է հաղթական խաղեր Ղազախստանի (2:1) և Լեհաստանի (1:0) հավաքականների դեմ, իսկ Պորտուգալիայի հավաքականի դեմ խաղը, որին մասնակցում էր նաև Կրիշտիանու Ռոնալդուն, ավարտվում է 1:1 հաշվով:

Սակայն 62-ամյա Պորտերֆիլդը մահանում է քաղցկեղից՝ կիսատ թողնելով գործը: Պորտերֆիլդից հետո հավաքականի մարզչի պաշտոնակատար է դառնում

նրա օգնականը՝ Վարդան Մինասյանը: 2009 թ. փետրվարի 10-ին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանի հրամանով Վարդան Մինասյանը նշանակվում է հավաքականի մարզիչ [28]:

ՈՒԵՖԱ Եվրո 2012 (ընտրական փուլ) ընտրական փուլի ընթացքում Մինասյանի գլխավորությամբ Հայաստանի հավաքականը B խմբում հանդիպում է Ռուսաստանի, Սլովակիայի, Իռլանդիայի, Մակեդոնիայի ու Անդորրայի հավաքականների դեմ: Հայաստանի հավաքականը երկու հանդիպումներում էլ հաղթում է Սլովակիայի (4:0 և 3:1) ու Անդորրայի (4:0 և 3:0) հավաքականներին: Մակեդոնիայի հավաքականի հետ խաղերն ավարտվում են 2:2 և 4:1, իսկ Ռուսաստանի հետ հանդիպումը՝ 0:0 հաշվով: B խմբում ամենաշատ գոլերը խփել էր Հայաստանի հավաքականը (22 գոլ), իսկ Հենրիխ Մխիթարյանը խփել էր 6 գոլ՝ դառնալով B խմբի՝ ամենաշատ գոլ խփած ֆուտբոլիստը [29]: Երիտասարդական հավաքականի նախկին ֆուտբոլիստներ Հենրիխ Մխիթարյանը, Գևորգ Ղազարյանը, Կառլեն Մկրտչյանը աստիճանաբար վերածվեցին հավաքականի առաջատարների: 2010 թ. օգոստոսին հավաքականի շարքերը համալրեց Յուրա Մովսիսյանը: Եթե ընտրական փուլի առաջին 2 խաղերում հավաքականը օպտիմալ տարբերակների որոնման փուլում էր, ապա սկսած երրորդ խաղից՝ հավաքականն սկսեց ցուցադրել այնպիսի ֆուտբոլ, որի մասին նախկինում կարելի էր միայն երազել: Հավաքելով 17 միավոր՝ վերջին տուրից առաջ Հայաստանի հավաքականը նույնիսկ հավակնում էր խմբում 2-րդ տեղ գրավելուն և անցումային խաղերի իրավունք վաստակելուն, սակայն մրցավարական ակնհայտ սխալների պատճառով մեր հավաքականը պարտվեց Իռլանդիայի հավաքականին և բավարարվեց երրորդ տեղով: Բայց դա էլ բավական էր պատմության մեջ լավագույն արդյունքն ապահովելու համար:

2012 թ. մայիսին Հունաստանի հավաքականի հետ հանդիպման ժամանակ Հայաստանի հավաքականն առաջին անգամ հանդես եկավ /adidas/ ֆիրմայի մարզահագուստով: Մեր ընտրանին հաջող սկսեց ընտրական փուլը՝ հաղթելով Մալթայի հավաքականին, սակայն դրան հետևեցին պարտությունները Բուլղարիայի և Իտալիայի հավաքականներից: Ընդհանուր առմամբ, Հայաստանի հավաքականն անցկացրած 10 խաղերում տարավ 4 հաղթանակ, մեկ հանդիպում ավարտվեց ոչ-ոքի, ևս 5 խաղում Հայաստանի հավաքականը պարտություն կրեց: Այս շրջափուլում

Հայաստանի հավաքականը մրցակցի հարկի տակ հաղթեց այնպիսի հավաքական-ների, ինչպիսիք են Դանիան և Չեխիան:

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը գլխավորեց նաև իսպանացի ֆուտբոլային մարզիչ՝ Խոակին Կապառոսը: Նա այդ պաշտոնում նշանակվեց՝ 2020 թ. մարտի 10-ին՝ փոխարինելով Աբրահամ Խաշմանյանին: Ներկայումս Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչն է Ալեքսանդր Պետրակովը:

«Հրազդան» մարզադաշտը կառուցվել է Գալուստ Գյուլբենկյանի ֆինանսական աջակցությամբ 1970-1971 թթ.՝ 11 ամսվա ընթացքում: Գտնվում է Հրազդան գետի ափին, որի անունով էլ կոչվել է: Բացման արարողությունը տեղի է ունեցել 1971 թ. մայիսի 19-ին[30]: Խորհրդային տարիներին եղել է ԽՍՀՄ ամենամեծ մարզադաշ-տերից մեկը և քիչ թվով երկհարկանի մարզադաշտերից մեկը: 1978 թ. ԽՍՀՄ հավա-քականն այս մարզադաշտում անցկացրել է երկու խաղ. դրանցից մեկն ապրիլին անցկացված ընկերական խաղն է Ֆինլանդիայի հավաքականի դեմ (10:2 հօգուտ ԽՍՀՄ), իսկ կես տարի անց Եվրոպայի առաջնության նախընտրական փուլի շրջա-նակներում ԽՍՀՄ հավաքականը խաղացել է Հունաստանի դեմ (2:0 հօգուտ ԽՍՀՄ հավաքականի): Ֆինլանդիայի հավաքականի դեմ խաղին ներկա է եղել 12 000, իսկ Հունաստանի հավաքականի դեմ խաղին՝ 40 հազար հանդիսական:

Հայաստանի ֆուտբոլի երիտասարդական հավաքականը Հայաստանի ազգային հավաքականի թիմերից մեկն է, որում կարող են խաղալ մինչև 21 տարեկան հայ ֆուտբոլիստներ: 1994 թ. սեպտեմբերի 6-ին, Բելգիայի Գենտ քաղաքում երիտասար-դական հավաքականը անցկացրել է իր առաջին՝ Բելգիայի երիտասարդական հավա-քականի դեմ խաղը (0-7): Ընդ որում երիտասարդական հավաքականի առաջին գլխա-վոր մարզիչը եղել է «Արարատի» լեգենդ Հովհաննես Զանազանյանը: Նրա ղեկավա-րությամբ երիտասարդական հավաքականը անցկացրել է ընտրական ցիկլի առաջին վեց խաղերը, որոնցից ընդամենը մեկում է հաղթանակ տարել, որն էլ դարձել է առաջինը պատմության մեջ: 1994 թ. հոկտեմբերի 8-ին Աբովյանում, Կիպրոսի դեմ խաղում խփվել է առաջին գոլը: Զանազանյանի փոխարեն առաջին ընտրական ցիկլը ավարտվեց Սամվել Պետրոսյանի գլխավորությամբ, ով իր սաների հետ մնացած չորս խաղերում այդպես էլ հաղթանակ չտարավ: Չնայած դրան, Սամվել Պետրոսյանին վստահվեց երիտասարդական թիմին ղեկավարել նաև հաջորդ ցիկլի ընթացքում:

Առաջին հինգ խաղերում թիմը պարտվեց, իսկ վեցերորդում հաղթեց Ալբանիային։ Դրան հետևեց երկու պարտություն, որից հետո թիմը սկսեց գլխավորել Վարուժան Սուքիասյանը։

2002 թ. թիմը սկսեց ղեկավարել «Շիրակի» այդ ժամանակվա մարզիչ Անդրանիկ Ադամյանը։ Նրա ղեկավարությամբ հավաքականը ցույց տվեց լավ արդյունքներ։ Առաջին հինգ խաղերում հավաքականը տարավ 3 հաղթանակ, որոնք Ուելսի (1:0), Բելառուսի (1:0) և Լեհաստանի (1:0) հավաքականների դեմ էին։ Հետո Ուելսի և Լեհաստանի դեմ խաղաց ոչ ոքի (երկուսն էլ 1-1 հաշվով)։ Այնուհետև պարտվեց Ուկրաինայի երիտասարդական հավաքականին։

Հաջորդ տարի Ադամյանին փոխարինեց Միխայ Ստոյկան, ով հավաքականի մարզիչների մեջ դարձավ առաջին օտարերկրացին։ Ռումինացի մարզիչը հավաքականի հետ անցկացրեց ընդամենը 3 խաղ, որից երկուսում թիմը կրեց պարտություն, իսկ մեկում խաղաց ոչ ոքի։ Դրանից հետո Ստոյկան լքեց պաշտոնը։

2007 թ. թիմը նորից գլխավորեց Վարուժան Սուքիասյանը։ Առաջին խաղը եղավ Լիբիայի երիտասարդական հավաքականի դեմ, որը կրում էր ընկերական խաղի բնույթ։ Խաղն ավարտվեց Սուքիասյանի սաների հաղթանակով։ Նրա ղեկավարությամբ թիմը Երևանում կարողացավ կամային հաղթանակ տանել Թուրքիայի երիտասարդական հավաքականի դեմ (2-1)։

2009 թ. երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ նշանակվեց Ֆլեմինգ Սերիցլեվը։ Այդպիսով, Եվրոպայի 2011 թ. երիտասարդական առաջնության ընտրական ցիկլի ժամանակ երիտասարդական հավաքականի ղեկավարումը վստահվեց դանիացի մասնագետին։ Հյուրընկալվելով Շվեյցարիային, Հայաստանը 1-2 հաշվով պարտություն կրեց։ Հետո Հայաստանը կրեց 3 անընդմեջ պարտություն։ Էստոնիայի հետ ոչ ոքի խաղալուց հետո Հայաստանը տարավ 3 հաղթանակ, որոնցից մեկում ջախջախեց հենց Էստոնիային, իսկ մյուս երկուսում հաղթեց Իռլանդիայի հավաքականին։ Այդ 3 հաղթանակները հնարավորություն տվեցին խմբում պայքարելու երկրորդ տեղի համար, բայց Վրաստանից կրած պարտությունից հետո (2-3) շանսերը կորեցին։ Թբիլիսիում կայացած պատասխան խաղի ժամանակ Հայաստանի հավաքականը վերջին ավելացրաց րոպեներին խփեց 2 գոլ, այդպիսով մրցակցին թույլ չտալով զբաղեցնել երկրորդ տեղը [31]։

Եվրո 2013-ի ընտրական ցիկլի ժամանակ թիմի գլխավոր մարզիչ դարձավ Սերիցլեվի Ասիսիենտը և «Բանանցի» մարզիչ Ռաֆայել Նազարյանը: Այս անգամ թիմը ցույց տվեց ամենալավ արդյունքը, ընտրական փուլի խմբային տուրում զբաղեցնելով երկրորդ տեղը: Թիմը տարավ 4 հաղթանակ, խաղաց 3 ոչ ոքի և կրեց ընդամենը մեկ պարտություն, որը եղավ Չեխիայի հետ խաղում: Միայն լրացուցիչ միավորներով թիմը չշարունակեց պայքարը խմբային տուրում: Ըստ կանոնակարգի, խմբերում երկրորդ տեղը զբաղեցրած թիմերից չորսը պետք անցնեին հաջորդ փուլ, սակայն Հայաստանի հավաքականը եղավ վեցերորդը և չշարունակեց պայքարը:

2013 թ. հունիսին Հայաստանի երիտասարդական հավաքականը սկսեց ելույթները Եվրո 2015-ի ընտրական փուլում: Վերջին խաղում Հայաստանի հավաքականը հաղթեց Բելառուսի հավաքականին և խմբում զբաղեցրեց 4-րդ տեղը:

Ներկա պահին երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ է նշանակվել Ռաֆայել Նազարյանը:

Մեր ժամանակների ճանաչված հայազգի ֆուտբոլիստներից է Հենրիխ Մխիթարյանը, ով 2013-2016 թթ. հաջողությամբ հանդես էր գալիս Գերմանիայի առաջնությունում «Բորուսիա Դորժտմունդ» ակումբում: 2016 թ. ամռանը նա Բորուսիայից տեղափոխվեց անգլիական «Մանչեսթեր Յունայթեդ», որտեղ հասավ մեծ հաջողություններ-ի, և դարձավ առաջին հայ ֆուտբոլիստը, որը կարողացավ նվաճել Եվրոպայի սուպերգավաթը: 2018 թ. հունվարի 22-ին Մխիթարյանը 4 տարվա պայմանագիր է կնքել Լոնդոնի «Արսենալի» հետ: Հայաստանի ազգային հավաքականի լավագույն ռմբարկուն է, իսկ 2015 թ.՝ ավագը:

Ներկայումս հանդես է գալիս իտալական «Ինտեր» ֆուտբոլային ակումբում: Ունի Երևանի պատվավոր քաղաքացու կոչում: Ութ անգամ դարձել է Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ (2009, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017 թթ.): Համարվում է Հայաստանի ազգային հավաքականի պատմության լավագույն ռմբարկուն՝ 86 խաղում խփած 29 գնդակով: Հանդիսանում է միակ հայ ֆուտբոլիստը, որը խաղացել է Անգլիայի Պրեմիեր Լիգայում: Մխիթարյանը հանդես է եկել Հայաստանի մինչև 17տ և մինչև 19տ հավաքականներում: Նա Հայաստանի հավաքականում իր նորամուտը նշեց 2007 թ. հունվարի 14-ին, Պանամայի հետ ընկերական խաղում:

2014թ. Աշխարհի առաջնության ընտրական փուլի Իտալիայի դեմ խաղում Հենրիխը խփել է իր 12-րդ գոլը և դարձել Հայաստանի հավաքականի պատմության լավագույն ռմբարկուն: 2016 թ. Ռոման Բերեզովսկու կարիերան ավարտելուց հետո դարձել է հավաքականի ավագը: 2020թ.-ի հոկտեմբերի 11-ին Վրաստանի ընտրանու դեմ խաղում Մխիթարյանը խփեց իր 30-րդ գոլը Հայաստանի հավաքականի կազմում:

Հայաստանի ազգային և երիտասարդական հավաքականների կազմում միակ ֆուտբոլիստն է, որին հաջողվել է դառնալ հետ-տրիկի հեղինակ: 2009 թ.՝ երիտասարդական հավաքականի կազմում հետ-տրիկի հեղինակ է դարձել Իռլանդիայի հետ խաղում, իսկ 2016թ. ազգային հավաքականի կազմում Գվատեմալայի հավաքականի դեմ խաղում՝ նույնպես Մխիթարյանը դարձավ հետ-տրիկի հեղինակ:

2.2 ֆուտբոլի 2006-2022թ աշխարհի առաջնության վերլուծությունը

Ավարտական աշխատանքի շրջանակներում անցկացրել ենք համեմատական վերլուծություն և գնահատել 2006-2022 թթ. Աշխարհի առաջնությունների մասնակից թիմերի ցուցանիշների արդյունավետությունը:

Արդյունքները և դրանց քննարկումը: Մենք փորձել ենք համեմատական վերլուծություն անցկացնել 2006-2022թթ Աշխարհի առաջնությունների մասնակից թիմերի ցուցանիշների արդյունավետության միջև:

1930թ-ին առաջին Աշխարհի առաջնությունը, որը կազմակերպվեց և անցկացվեց Ուրուգվայում, ֆուտբոլային բարձրագուն մարմնի ՖԻՖԱ-ի կողմից, մասնակից թիմերի քանակը 13 էր՝ հետագայում ֆուտբոլ մարզաձևի ընդլայնումն ու մասսայականացումն այն հասցրեց 32-ի և մինչ օրս անցկացվել է 22 առաջնություն:

Վերջին 22-րդ առաջնությունը, մեծագույն և սպասված իրադարձությունը, տեղի ունեցավ 2022թ-ին Արաբական աշխարհում, Կատարում՝ ընդգրկելով 5 քաղաքներ: Ավելի քան 220 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ այս մրցաշարը համարվում է երբևէ անցկացված ամենաթանկ ֆուտբոլի աշխարհի առաջնությունը:

Այս տեսանկյունից մեզ հաջողվել է հիմնվել վերջին Աշխարհի առաջնության դիտումներից և վերլուծությունից ստացված տվյալների վրա:

Շուրջ մեկ ամիս տևած առաջնության ընթացքում տեղի ունեցան 64 խաղ:

Ստացված արդյունքները վկայեցին հետևյալը՝ 2022թ-ի առաջնության ընթացքում խփած գնդակների քանակը կազմեց 172, միջին թվաբանական վերլուծությունը ցույց տվեց, որ գոլերի մեծ մասը գրանցվեցին 52 և 86-րդ րոպեներին, ամենագոլառատ խաղը ավարտվեց 7-0 հաշվով/Իսպանիա-Կոստա Ռիկա/, ամենաարագ գոլը գրանցվեց 4-րդ րոպեին /Կանադա1-2Մարոկկո/, լրացուցիչ ժամանակը կազմեց 1-ից մինչև 13 րոպե, այս ժամանակահատվածը նույնպես գոլազուրկ չէր 45+ 5 գոլ, 90+ 14 գոլ:

Այս տվյալները համեմատվեցին 2006թ-ի Աշխարհի առաջնության արդյունքների հետ:

Մրցաշարում ֆուտբոլիստները առավելագույն վազում էին միջինը 10-11 կմ մեկ խաղում, կազմակերպում են միջին հաշվարկով 81 գրոհ, որից 35-ը՝ եզրերով, իսկ 46-ն իրականացնում են դաշտի կենտրոնով, սակայն տրամաբանական ավարտ ունենում են դրանցից 13-19 %-ը:

Տուգանային հրապարակից դուրս հարվածների արդյունավետությունը կտրուկ աճել է՝ յուրաքանչյուր 29-րդ հարվածը ավարտվել է գոլով, 2014 թվականի Աշխարհի գավաթի խաղարկության ժամանակ այդ ցուցանիշը եղել է 42, իսկ 2018թ-ին՝ 46:

Աշխարհի 2022 թ. գավաթի խաղարկությունում 29 անկյունից 1-ը գոլ է խփվել: 2010 թ. սա տեղի ունեցավ 61, 2014 թ.՝ 36, իսկ 2018 թ. 40 անգամը մեկ:

Աղյուսակ 1

2006-2022 թթ ֆուտբոլի աշխարհի առաջնությունների արդյունքների համեմատական վերլուծությունը

Ցուցանիշներ	2022թ	2006 թ
Խփված գնդակների քանակը	172/2.60 խաղում/	147
Խաղի ամենամեծ արդյունքը	7-0	6-0
Ամենաարագ գոլը րոպե	4	2
Լրացուցիչ ժամանակը րոպե	1՝-13՝	1՝-5՝
Գրանցված գոլերի ժամանակը րոպե	52՝-86՝	7՝ - 84՝
Լրացուցիչ ժամանակում գրանցված գոլերի քանակը րոպե	45՝+5 – 90՝+14	45՝+1 –90՝+5

Այստեղից երևում է, որ 2022թ-ի առաջնության ընթացքում խփված գնդակների քանակ գերազանցում են 25-ով 2006թ-ի տվյալները, խաղի ամենամեծ արդյունքը գրեթե նույնն է, ամենաարագ գոլի տարբերությունը կազմում է 2 րոպե, լրացուցիչ

ժամանակը զգալիորեն ավելացել է անցած տարիների համեմատ, գրանցված գոլերի համեմատական ժամանակը 7-րդ և 84 րոպեներն են, լրացուցիչ ժամանակում գրանցված գոլերի քանակն էլ զգալի տարբերվում է 2022 թ-ին՝ 21, իսկ 2006-ին՝ 6:

Ըստ մեր կարծիքի՝ նման երևույթը արտացոլում է մարզաձևի զարգացման օրինաչափությունները:

Այսպիսով՝ համեմատական կոնտենտ վերլուծության արդյունքում հավանաբար հաջողվեց բացահայտել 2022 և 2006 թթ Աշխարհի առաջնությունների ցուցանիշների տարբերությունները՝ խփված գնդակների քանակը գերազանցեց 22-ով, լրացուցիչ ժամանակի ավելացումը օգտագործվեց նպատակային գրանցվեց մինչև 21 գոլ, իսկ հաղթանակի համար պայքարն առավել սրվում է խաղի վերջին 84-86-րդ րոպեներին այս ամենը վկայում է ֆուտբոլիստների բարձր և ֆունկցիոնալ պատրաստվածության մասին:

Կարելի է եզրակացնել, որ ֆուտբոլը պահպանում է իր կայուն ձեռագիրը կատարելագործվում են տակտիկական նոր համակարգեր, ֆիզիկական, կամային ընդունակությունները և նպատակաուղղվածությունը դեպի առավելագույնի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեմայի շրջանակում մեր կողմից կատարված տեսական և մեթոդական գրականության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

Ֆուտբոլը, ինչպես և ցանկացած սպորտաձև, նախ պետք է զարգացում ապրի պատանի և երիտասարդ սերնդի մոտ: Իհարկե, Ֆուտբոլի ֆեդերացիան մի շարք միջոցառումներ է իրականացնում, սակայն ոչ արդյունավետ:

Դրա մասին են վկայում մեր պատանիների արդյունքները ամենատարբեր մրցաշարերում: Ինչպես գիտենք, մեր պատանի ֆուտբոլիստների ցուցանիշները շատ ավելի վատն են, քան ազգային հավաքականինը: Իսկ ինչու են Հայաստանի պատանի ֆուտբոլիստներն այդպիսի վատ արդյունքներ ցուցաբերում: Առաջին հերթին հարկ է անդրադառնալ այն հանգամանքին, որ Հայաստանում ֆուտբոլի զարգացման ուղղությամբ իրականացվող բոլոր միջոցառումները կրում են բավական մակերեսային բնույթ և չունեն կոնկրետ ուղղվածություն, այլ խոսքով՝ բացակայում է այդ սպորտաձևի զարգացման կոնցեպցիան, ինչի արդյունքում ստացվում է այնպես, որ մարզադպրոցներում ընդգրկված երեխաները մի որոշակի ժամանակահատված ուղղակի ժամանցային տարբերակով ֆուտբոլ են խաղում, հետագայում նրանց մեծ մասը թողնում է պարապմունքները: Փաստորեն, մարզադպրոցները երեխաների մեծամասնության համար չեն դառնում ապագա ֆուտբոլիստի ձևավորման դարբնոց:

Իսկ որն է այստեղ Ֆուտբոլի ֆեդերացիայի և սպորտի զարգացման համար պատասխանատու կառույցների խնդիրը: Եթե ցանկանում ենք իրոք մեզ մոտ զարգացնել այս բացառիկ, գերհեղինակավոր օլիմպիական մարզաձևը, պետք է անհապաղ իրականացնել մի շարք համակարգված և նպատակային միջոցառումներ: Ֆուտբոլն այն քիչ մարզաձևերից է, որն իրեն արդարացնում է նաև ֆինանսական տեսակետից, և այդ գիտակցությունը լուրջ խթան կարող է հանդիսանալ պատանիների համար, սակայն ապագա ֆուտբոլիստներն առաջին հերթին պետք է իրենց թիկունքում որպես իրենց աջակից տեսնեն երկրի սպորտային կառույցներին: Մեզ մոտ այսօր չկան կոնկրետ գործող մեխանիզմներ, որ գոնե փորձենք պատկերացում կազմել, թե ինչպիսին է մեր երկրի ֆուտբոլային պոտենցիալը: Չկան նաև այնպիսի մասնագետներ, որոնք կարո-

ղանան ամբողջությամբ բացահայտել երեխաների պոտենցիալը, նրանց տաղանդը, և այս ամենին գումարվում է նաև այն, որ պատանի ֆուտբոլիստների մոտ գրեթե բացակայում է ավելիին ձգտելու մոտիվացիան, քանզի, թեև կազմակերպվում են մրցաշարեր, սակայն բացակայում են մշակված մեխանիզմներ, որոնք պատանի ֆուտբոլիստին աստիճանաբար կուղեկցեն դեպի մարզական մեծ նվաճումներ: Արդյունքում ոչ միայն կադրերի մի մասին չենք կարողանում ներգրավել և ներգրավվածներին բացահայտել, այլև նրանք իրենք էլ ամբողջությամբ չեն նվիրվում ֆուտբոլին:

Սակայն նշենք նաև, որ շատ ավելի դյուրին է ամբողջական ծրագիր իրականացնել փոքր երկրում, քան, օրինակ, անծայրածիր Ռուսաստանում, որտեղ ֆեդերալ մասշտաբով ցանկացած ծրագիր իրականացնելու համար միլիարդավոր դոլարներ են հարկավոր: Հայաստանում այս ոլորտում լուրջ արդյունք ակնկալելու համար ուղղակի ցանկություն և լավ մշակված ծրագիր է հարկավոր, ուրիշ ոչինչ: Այն, ինչ հիմա է արվում, երբեք և ոչ մի արդյունքի չի հանգեցնի, երբ ֆուտբոլային լուրջ ավանդույթներ և ֆուտբոլային դպրոց չունեցող երկրում ամեն ինչ թողնված է մի քանի ակումբների ու մարզիչների հայեցողությանը, փոխարենը տալ բոլորին կոնկրետ մշակված ռեալ ծրագիր և դրվեն կոնկրետ խնդիրներ՝ ընդգծելով անգամ նպատակահարմար խաղառճը: Միայն այս ամենի արդյունքում կձևավորվի իսկական մարզական գործընթաց, ինչն էլ կհանգեցնի լուրջ արդյունքների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Ա.Ա. ֆուտբոլիստների ֆունկցիոնալ հնարավորությունները և մարզման մեթոդիկան, Երևան, 2009, 56 էջ
2. Հակոբյան Ս: Ֆուտբոլ: Երևան: «Էդիթ Պրինտ»: 2009, էջ 6-7
3. Նիկոյան Մ.Է. Պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները, Երևան, 2015, 112 էջ
4. Айзенберг К. Футбол как глобальный феномен: Исторические перспективы //Логос. – 2006. – Т. 3. – №. 54. – С. 91-103.
5. Полишкис М.С., Выжгин В.А Футбол: учебник. М.: Физкультура, образование, наука. – 1999. – 254с.
6. Чемпионат мира по футболу 2018 [Электронный ресурс] // Wikipedia.
7. John Goulstone. Football's Secret History. London, 2001
8. Christiane Eisenberg (Hg.). Fußball, soccer, calcio. Ein englischer Sport auf seinem Weg um die Welt. München, 1997
9. Georg Maercker. Vom Kaiserheer zur Reichswehr. Ein Beitrag zur Geschichte der deutschen Revolution. Leipzig, 1921. S. 309
10. Pierre Lanfranchi, Matthew Taylor. Moving with the Ball. The Migration of Professional Footballers. Oxford, 2001. KaS. 3
11. Matthias Marschik. Between Manipulation and Resistance: Viennese Football in the Nazi Era // Journal of Contemporary History. 34. 1999. S. 215–229
12. «2006 FIFA World Cup broadcast wider, longer and farther than ever before»: FIFA. com: Fédération Internationale de Football Association: Feb 2007
13. Tom Dunmore, Historical Dictionary of Soccer, "The World Cup is now the most-watched sporting event in the world on television, above even the Olympic Games."Sep 2011, page 235
14. Stephen Dobson and John Goddard, The Economics of Football, "The World Cup is the most widely viewed sporting event in the world: the estimated cumulative television audience for the 2006 World Cup in Germany was 26.2 billion, an average of 409 million viewers per match." 2006, page 407

15. Glenn M. Wong, The Comprehensive Guide to Careers in Sports, "The World Cup is the most-watched sporting event in the world. In 2006, more than 30 billion viewers in 214 countries watched the World Cup on television, and more than 3.3 million spectators attended the 64 matches of the tournament. 2010, page 144
16. «England National Football Team Match No. 1»: England Football Online: Nov 2007
17. «British PM backs return of Home Nations championship»: Agence France-Presse: Dec 2007
18. Elbech Søren, Stokkermans Karel : «Intermediate Games of the IV. Olympiad»: rec.sport. soccer Statistics Foundation: Jun 2008
19. «History of FIFA – FIFA takes shape»: FIFA.com: Fédération Internationale de Football Association: Jul 2014
20. «History of FIFA – More associations follow»: FIFA.com: Fédération Internationale de Football Association: Jul 2014
21. «History of FIFA – The first FIFA World Cup»: FIFA.com: Fédération Internationale de Football Association: Jul 2014
22. Molinaro John F: «The World Cup's 1st goal scorer»: CBC: Jul 2014
23. «FIFA World Cup Origin» (PDF): FIFA.com: Fédération Internationale de Football Association: Jun 2010
24. «The Olympic Odyssey so far ... (Part 1: 1908–1964)»: FIFA.com: Fédération Internationale de Football Association: Jun 2004
25. «Los datos más curiosos de la Fiesta del Fútbol - Brasil 1950»: Jul 2012